
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի անկախացումից հետո երկկողմ շփումները եվրոպական երկրների հետ նոր բնույթ ստացան, դարձան ավելի հաճախակի և ընդգրկեցին հասարակական-քաղաքական հարաբերությունների մի շարք ոլորտներ: Հայ-ֆրանսիական բարիդրացիական հարաբերությունների հիմքը երկու պետությունների միջև համագործակցությունն է նաև արտաքին քաղաքականության հիմնախնդիրների հարցում: ՀՀ-ի պարագայում այդպիսիք են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացները, որոնցում զգալի է Ֆրանսիայի Հանրապետության դերակատարումը:

Ֆրանսիան ԵՄ-ի այն անդամ պետություններից է, որն ակտիվորեն հետաքրքրվում է Հայաստանով և մյուս արևմտաեվրոպական երկրների համեմատությամբ Հայաստանի հանդեպ ունի ավելի բարեկամական դիրքորոշում: Դա բացատրվում է Հայաստանի ու հայերի հանդեպ ընդհանրապես ֆրանսիական հասարակության տածած համակրանքով, երկրի հասարակական և տնտեսական կյանքի մի շարք բնագավառներում ֆրանսահայերի և ֆրանսիացիների միջև ձևավորված համակրանքով ու բարեկամական կապերով, Ֆրանսիայի տնտեսական, քաղաքական, մշակութային, արվեստի, մարզական, ՁԼՄ-ների ոլորտներում հայերի ունեցած հաջողություններով, որոնք ազդում են ՀՀ-ի նկատմամբ Ֆրանսիայի որդեգրած դիրքորոշման և աշխարհի այս տարածաշրջանում վերջինիս վարած քաղաքականության վրա:

Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման միջազգային գործընթացը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը դարձավ ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի կառավարման շրջանում, ինչի շնորհիվ կրկնապատկվեցին ջանքերը այդ գործընթացում առաջընթաց ապահովելու համար: Հայկական լրբքին ակտիվ գործունեություն է ծավալում հատկապես ԱՄՆ-ում և Ֆրանսիայի Հանրապետությունում՝ Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու ուղղությամբ: Ֆրանսիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գոր-

ծում մեծ է Ապրիլի 24-ի կոմիտեի¹ և Հայ դատի պաշտպանության հանձնախմբի դերը:

Հայոց ցեղասպանությունը ոգեկոչելու և Ֆրանսիայի իշխանությունների կողմից ճանաչման հասնելու նպատակով 1995 թ., Մեծ եղեռնի 80-ամյակի կապակցությամբ, ֆրանսահայ հասարակական, մշակութային ու կրոնական կազմակերպությունները առաջադրված խնդիրները լուծելու նպատակով համախմբվեցին Ապրիլի 24-ի կոմիտեի շուրջ:

Շարունակական աշխատանք տարվեց ֆրանսահայ համայնքի կողմից մի շարք փաստաթղթեր նախապատրաստելու և ֆրանսիական իշխանություններին ու հասարակությանը լավագույնս ներկայացնելու համար: Լոբբիստական աշխատանքը հիմնականում անմիջական շփման բնույթ ունեւր Ֆրանսիայի պետական ու քաղաքական շրջանակներում՝ քննարկումներ, սեմինարներ, բանավեճեր, միջազգային գիտաժողովներ, Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված միջոցառումներ, ինչպես նաև հասարակական քննարկումներում և լրատվամիջոցներում Թուրքիայի կողմից ցեղասպանության ժխտողականության դատապարտում:

Հաճախակի օգտագործվում էր նաև ֆրանսիացիների մասնակցությամբ միջազգային հանդիպումների հարթակը: Այդ տեսակետից կարևոր էր **«Մարդկության դեմ գործած ոճիրների անպատժելիությունը»** թեմայով հանդիպումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական գրասենյակում (1999 թ. ապրիլի 10-ին), որին մասնակցում էին Լա Հեյի միջազգային դատարանի պաշտոնյաներ, իրավաբաններ, փաստաբաններ, Սորբոնի համալսարանի հայտնի պրոֆեսորներ, որոնք հանդես եկան ցեղասպանությունը միջազգային իրավունքի տեսանկյունից քննադատող զեկուցումներով: Խորհրդակցության նյութն ընդգրկում էր *ցեղասպանությունը կանխելու և վերացնելու* ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայից մինչև 1998 թ. Հռոմի դիվանագիտական կոնֆերանսը՝ շոշափելով Միջազգային դատարանի կարգավիճակի ու լիազորությունների, ոճիրների հատուցման, դրանց կանխման հեռանկարների հարցերը, պատմական զուգահեռները, 20-րդ դարից մինչև ներկա օրերի իրադարձությունները, ժխտողականությունը դատապարտելու անհրաժեշտությունը՝ դրա դեմ իրավական արգելքներ սահմանելու հարցերը²:

Հայկական լոբբիստական կառույցների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում նաև Հայ դատի պաշտպանության հանձնախումբը (այսուհետ՝ Հայ դատ), որը նպաստում է եվրոպական երկրներում և մասնավորապես Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Հայ դատը տեղական հանձնախմբեր ունի Փարիզում, Մարսելում, Լիոնում

¹ *Ապրիլի 24-ի կոմիտեն*, որի հիմքը դրվել է ազգային ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերում ջանքերը համատեղելու մասին 1993 թ. երեք ավանդական կուսակցությունների որոշմամբ, հիմնվել է 1998 թ. և միավորում է ֆրանսահայ հիմնական կազմակերպությունները:

² Տե՛ս ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, գործ 22, էջ 100-101:

և Ֆրանսիայի կենտրոնական շրջանում³, իսկ գործունեության ոճը նման է Ապրիլի 24-ի կոմիտեին:

Հայոց ցեղասպանության խնդիրը քննարկումների և բանավեճերի առարկա է նաև Ֆրանսիայի գիտական, հասարակական և քաղաքական շրջանակներում՝ մասնավորապես ժան Մարի Կառզունի և Իվ Տերնոնի ուսումնասիրությունների շնորհիվ⁴: Նրանց հրատարակած փաստաթղթերի ժողովածուներում և ուսումնասիրություններում օգտագործվել են փաստավավերագրական նյութեր:

Հաշվի առնելով Ֆրանսիայի Հանրապետության պարագայում հայ համայնքի ու երկկողմ բարեկամական հարաբերությունների զարգացման ընդհանուր միտումները՝ Ֆրանսիայի ԱԺ-ն առաջիններից մեկը (1998 թ. մայիսի 29-ին) ճանաչեց 1915 թ. Հայոց ցեղասպանությունը և դատապարտեց այն⁵: «Ֆրանսիան պաշտոնապես ճանաչում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը», -ասվում է Ազգային ժողովի նախագահ Լորան Ֆաբիուսի ստորագրած օրինագծում⁶: Այս գործընթացում կարևոր դեր են ունեցել Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության անդամները, ինչը բխում էր նրանց առաջնորդ՝ Ֆրանսիայի վարչապետ Լիոնել ժոսպենի նախընտրական խոստումներից: Ֆրանսիան առաջին պետություններից էր, որ ճանաչեց Հայոց ցեղասպանությունը նաև օրենքի ուժով⁷: Ֆրանսիայում լուրջ ներքաղաքական պայքար էր ընթանում, քանի որ գործադիր իշխանության որոշ ներկայացուցիչներ Հայոց ցեղասպանության ընդունումը կապում էին Թուրքիայի պարագայում հարաբերությունների վատացման հետ: Որոշ խոչընդոտներից հետո, 2000 թ. նոյեմբերի 8-ին Ֆրանսիայի Սենատում ընդունվեց Հայոց ցեղասպանությունը օրենքի ուժով ճանաչող որոշումը, որը նախագահ Ժակ Շիրակի ստորագրելուց հետո, 2001 թ. հունվարի 3-ին մտավ ուժի մեջ⁸:

Թուրքական իշխանությունների կողմից Ֆրանսիայի վրա ճնշումներ գործադրելու փորձերը հասան աննախադեպ չափերի՝ վերածվելով բացահայտ սպառնալիքների: Թուրքիան սպառնում էր դադարեցնել համագործակցությունը Ֆրանսիայի հետ քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում: Ի պատասխան՝ Ֆրանսիայի ԱԳՆ-ն հայտարարեց, որ Թուրքիայի հանդեպ Ֆրանսիայի քաղաքականության նպատակները և բովանդակությունը որևէ փոփոխության չեն ենթարկվել և, բացի այդ, ժամանակակից Թուրքիան պատասխանատու չէ Օսմանյան կայսրությունում կատարվածի համար և միաժամանակ հիշեցրեց, թե Ֆրանսիան ինչ դերակատարություն էր ունեցել

³ Տե՛ս նույն տեղը, էջ 97:

⁴ Տե՛ս **Արման Կիրակոսյան**, Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Եր., 2006, էջ 214-215:

⁵ Տե՛ս **Nikolay Hovhannisyán**, The Armenian Genocide, Yerevan, 2002, էջ 570:

⁶ Տե՛ս **Gerard Dedeyan**, Histoire des Arméniens, Paris, 2006, էջ 675:

⁷ Տե՛ս **Nikolay Hovhannisyán**, The Armenian Genocide, Yerevan, 2002, էջ 97-100:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 570:

2000 թ. դեկտեմբերի 4-ին ԵԽ-ում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցի քննարկման ժամանակ դրական որոշում կայացնելու գործում:

Ֆրանսիական կողմը, փորձելով մեղմել իրավիճակը, Թուրքիայի հետ փոխհարաբերությունների հարցում համապատասխան քաղաքականություն էր վարում: Ժան Պիեռ Մասսեռեն, որը Ֆրանսիայի պառլամենտի զինվորականների հարցերով պետական հանձնաժողովի քարտուղարն էր, 1915 թ. իրադարձությունների հարցում գտնում էր, որ **«20-րդ դարի ամենադաժան ողբերգություններից մեկի համար չպետք է պատասխանատու համարել ներկայիս Թուրքիայի իշխանություններին»**⁹:

Այդուհանդերձ, թուրքական իշխանությունները արտգործնախարար Իսմայիլ Ջեմի միջոցով անմիջապես քննադատեցին ֆրանսիացիների քվեարկությունը. «Մենք դատապարտում ենք օրենքի այս նախագծի ընդունումը, որը միանշանակ բացասական հետևանքներ կունենա թուրք-ֆրանսիական հարաբերությունների վրա, այդ ճանաչումը միայն կնպաստի հայկական ահաբեկչության ուժեղացմանը, որի վերաբերյալ Թուրքիան չի փոխել իր դիրքորոշումը»¹⁰: Թուրքիայի արտգործնախարարության խոսնակ Ն. Ուտկանը հավաստիացրել էր, որ «անհնար է մեղադրել թուրքական կողմին և որպես ցեղասպանություն ներկայացնել համաշխարհային պատերազմի ժամանակ տեղ գտած իրադարձությունը»¹¹: Այս ամենին հակառակ՝ մեկ տարի անց Ֆրանսիայի և Թուրքիայի տնտեսական հարաբերություններում գրանցվեց զգալի դրական առաջխաղացում:

Ֆրանսիան, ունենալով Թուրքիայում տնտեսական շահեր, Չայոց ցեղասպանության հարցը դիտում էր որպես հնարավոր սպառնալիք ֆրանս-թուրքական տնտեսական ու քաղաքական հարաբերությունների համար, սակայն չէր կարող անտեսել ֆրանսահայ ընտրազանգվածի և ընդհանրապես հասարակական կարծիքը, որը հիմնականում կարևորում է պատմական արդարության վերականգնումը և մարդկության դեմ կատարված հանցագործությունների դատապարտումը:

Համապատասխան հասարակական կարծիք ձևավորելու ուղղությամբ կարևոր էր նաև ֆիլմերի միջոցով գաղափարական աշխատանքի իրականացումը: 2002 թ. մայիսի 20-ին Կաննի միջազգային 55-րդ կինոփառատոնում Չայոց ցեղասպանության վերաբերյալ Ատոմ Էգոյանի ներկայացրած «Արարատ» ֆիլմը¹² արժանացավ ջերմ ընդունելության ու արձագանքների, հաշվի առնելով նաև աշխարհահռչակ շանսոնյե Շ. Ազնավուրի մասնակցությունը: Այս տեսակետից կարևոր դեր խաղաց նաև ֆրանսահայ ականավոր կինոռեժիսոր Ա. Վերնոյի «Մայրիկ» ֆիլմը:

⁹ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ֆոնդ 1, գործ 22, էջ 186:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 187:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 29:

Հետևողական աշխատանքը տվեց իր արդյունքները, և արդեն 2006 թ. հոկտեմբերին Ֆրանսիայի ԱԺ-ի կողմից ընդունվեց Հայոց ցեղասպանության ժխտումը դատապարտող օրենք, որն ընդունվել է 127 կողմ և 19 դեմ ձայների հարաբերակցությամբ: Այն ցեղասպանությունը ժխտողների համար նախատեսում էր 45.000 եվրո տուգանք կամ մինչև մեկ տարվա ազատազրկում¹³: Ընդ որում՝ Ֆրանսիացի պատգամավորները չընդունեցին Պատրիկ Դևեջյանի առաջարկած ուղղումը, որի համաձայն՝ օրենքը չպետք է տարածվեր պատմաբանների վրա¹⁴: Սակայն Ֆրանսիայի Սենատն արգելափակեց օրինագծի ընդունումը, և հարաբերությունները Փարիզի և Անկարայի միջև որոշ բարելավում արձանագրեցին առևտրատնտեսական ոլորտում: Մինչդեռ Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը, որը 2006 թ. ներկայացնում էր Թուրքիան ԵՄ-ի հետ բանակցություններում, հայտարարեց, թե այդ օրենքը խախտում է ԵՄ-ի հիմնարար սկզբունքներից մեկը՝ խոսքի ազատությունը:

Ֆրանսիայում բարձրագույն իշխանության համար մղվող պայքարում լուրջ կշիռ է ներկայացնում ստվարաթիվ հայկական համայնքը, որի տրամադրությունը մեծապես պայմանավորված է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացով:

Ֆրանսիայի 2007 թ. նախագահական ընտրությունների ժամանակ հաղթանակած թեկնածու Նիկոլա Սարկոզին նույնպես խոստացել էր պաշտպանել Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը, ինչը կենսագործեց նախագահական լիազորությունների իրականացման վերջին տարում:

Ֆրանսահայերը վրդովվել էին Ն. Սարկոզիի՝ խոստումներից խուսափելու քաղաքականությունից և նույնիսկ Շարլ Ազնավուրը հրապարակավ զգուշացրել էր Ն. Սարկոզիին, որ կկորցնի 500,000 Ֆրանսահայերի աջակցությունը 2012 թ. նախագահական ընտրություններին:

Արդյունքում՝ 2011 թվականի մայիսի 4-ին Ֆրանսիայի Սենատում կրկին քննարկվեց Հայոց ցեղասպանության մերժումը քրեականացնող օրինագիծը:

Քվեարկությունից առաջ Սենատի օրենսդրական հանձնաժողովը բացասական դիրքորոշում հայտնեց օրինագծի վերաբերյալ և առաջարկեց այն հանել քվեարկությունից, ընդգծելով. «Սխալ է օրենք ունենալ, որը կարգավորում է պատմությունը և առավել ևս բանտարկություն է նախատեսում»: Հատկանշական էր նաև այն հանգամանքը, որ փորձեր արվեցին ցեղասպանության խնդիրը կապել Ֆրանսիայի ներկայիս դերի հետ՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի, ինչպես նաև տարածաշրջանում տիրող բարդ տնտեսական վիճակի, Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման, փակ սահմանի առկայությունը հաշվի առնելու անհրաժեշտության հետ:

¹³ Տե՛ս «Առավոտ» թերթի կայքէջ. www.aravot.am.

¹⁴ Տե՛ս համահայկական ցանցի կայքէջ. www.panarmenian.net.

Երկարատև քննարկումներից հետո օրինագիծն օրակարգից հանելու առաջարկն ընդունվեց ձայների մեծամասնությամբ՝ 196 կողմ, 74 դեմ, որից հետո Ֆրանսիայի հայ համայնքի ներկայացուցիչները Սենատի շենքի առջև բողոքի ցույց կազմակերպեցին¹⁵:

Ֆրանսիայում նախագահական ընտրությունների նախաշեմին թեժացել էր պայքարը հայ համայնքի աջակցությունը ստանալու համար: Եվ այս ենթատեքստում կարելի է դիտարկել Ֆրանսիայի նախկին նախագահ Ն. Սարկոզիի (2011 թ. հոկտեմբերին) Հայաստան կատարած այցելությունը, որի ժամանակ նա հայտարարեց, որ Թուրքիան բավական ժամանակ ուներ, որպեսզի մտածեր Հայոց ցեղասպանության ճանաչման մասին: Սարկոզին նաև ընդգծեց, որ եթե Թուրքիայի նման խոշոր պետությունը ճանաչեր պատմության սեփական էջերը, Ֆրանսիան և Հայաստանը դա կհամարեին խաղաղության և հաշտեցման քայլ: Նախագահը նշել էր նաև, որ եթե մինչև 2011 թ. ավարտը Թուրքիան չամի դա, ապա Ֆրանսիան ստիպված կլինի վավերացնել օրինագիծը¹⁶:

Հայոց ցեղասպանության փաստը դիվանագիտական ճնշման միջոցով Թուրքիային ընդունել տալու Ֆրանսիայի փորձերը ոչ մի արդյունք չարձանագրեցին, ուստի Ֆրանսիայի Ներկայացուցիչների պալատում (2011 թ. դեկտեմբերի 22-ին) օրինագիծը վավերացվեց:

Ֆրանսիացի խորհրդարանականները Թուրքիային դիմեցին Հայոց ցեղասպանության իրողությունն ընդունելու կոչով, ընդգծելով, որ պետք է ընդունել անցյալը՝ ապագան կառուցելու համար:

Օրինագծի ընդունումից հետո Հայաստանի արտգործնախարարության մամուլի և տեղեկատվության վարչությունը տարածեց արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հայտարարությունը, որում երախտիքի խոսք էր հնչեցվում Ֆրանսիայի բարձրագույն ղեկավարությանը, Ազգային ժողովին և ֆրանսիական ժողովրդին: Օրինագծի ընդունումից անմիջապես հետո Թուրքիան հայտարարեց, որ, ի նշան բողոքի, անորոշ ժամանակով Փարիզից ետ է կանչում իր դեսպանին¹⁷, ինչպես նաև սառեցնում է ռազմաքաղաքական ոլորտի հարաբերությունները:

Թուրքիայի հնչեցրած սպառնալիքների մեծ մասը այդպես էլ չիրագործվեց, հաշվի առնելով թե՛ Ֆրանսիայի կշիռն ու դերը ԵՄ-ում, և թե՛ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի մերժումը Ֆրանսիայի Սահմանադրական դատարանի կողմից:

Վերոհիշյալ փաստերն ու իրադարձությունները, փափագած հույսերն ու ձախողումները վկայում են, որ ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս հայ ժողովրդի մի հատվածը իր անմիջական խնդիրների

¹⁵ Տե՛ս Բ. Չարխչյանի հոդվածը ցեղասպանության միջազգային ճանաչման մասին <http://www.hovikcharkhchyan.wordpress.com/2011/05/05/>

¹⁶ Նիկոլյա Սարկոզին հույս էր հայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը տեղի կունենա իր նախագահության օրոք. <http://www.panarmenian.net/arm/politics/>

¹⁷ Տե՛ս «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի կայքէջ, <http://www.azatutyun.am/content/article/24430234.html/>

լուծուճը կապուճ է այլ պետութիւնների ու նրանց ղեկավարների հետ, մինչդեռ միայն սեփական երկիրը հզորացնելու, ռեսուրսները կրկնապատկելու և անմիջական հակառակորդների հետ լեզու գտնելու միջոցով է հնարավոր լուծել ազգային նշանակություն ունեցող խնդիրները:

АШОТ КАРАПЕТЯН – *Процесс признания Геноцида армян во Французской республике.* – Среди стран – членов ЕС именно Франция наиболее активно сотрудничает с Арменией. Это объясняется, в частности, давними историческими связями двух народов и наличием влиятельной армянской диаспоры, играющей заметную роль во французской общественно-политической жизни.

Международное признание Геноцида армян – одна из важнейших внешнеполитических задач Армении. Франции принадлежит в этом процессе немаловажное значение. В числе первых в мае 1998 г. она признала и осудила чудовищное преступление. Признание вступило в новую фазу в 2011 г., когда во Франции обсуждался законопроект о криминализации отрицания геноцида. Закон, однако, по ряду политических соображений не был утверждён.

Разумеется, при достижении приоритетных национальных задач нельзя не принимать во внимание содействие и сочувствие дружественных стран. И тем не менее главное на этом пути – динамичное демократическое развитие нашего государства, которое вынудит международное сообщество считаться с интересами Армении.

ASHOT KARAPETYAN – *The Process of Recognition of the Armenian Genocide in the Republic of France.* – France is one of the EU countries, which is actively engaged in cooperation with Armenia, having historical background and strong Armenian Diaspora which play a significant role in social-political life of France.

The international recognition of the Armenian Genocide (1915) in Ottoman Empire is one of the priorities of Armenian foreign policy.

France has a key position in this process and among the first countries that recognized the Armenian Genocide in May 1998. The process continues until the French parliament (2011) accepted the law criminalizing the rejection of Armenian genocide in the territory of France, but later it was rejected by the state constitutional court.

Towards the national interests implementation any country needs the assistance of ally country, but the main target in this way must be the dynamic evaluation of the Republic of Armenia as a contemporary democratic and social state.